



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՇՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

---

**ԱՆԴԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քաղ. Երեւան

25 ապրիլի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի  
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիայանի  
Վ. Պողոսյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Նակոր Ռաֆիկի Նակորյանի  
անհագության դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

**ՊԱՐՁԵՑ.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կերպի՝ քաղաքացի Նակոր Ռաֆիկի Նակորյանը 18.04.2012թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածներին հակասող ճանաչել 2007թ. դեկտեմբերի 10-ի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150 հոդ. 1-ին մասի դրույթները»:

Դիմողը՝ մանրամասն շարադրելով պարզամավորի թեկնածուի գրանցման հետ կապված վեճի փաստական հանգամանքները, նաև նշում է, որ վիճարկվող նորմը հակասահմանադրական է, քանի որ սահմանափակվում է իր իրավունքների դափական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, գրկում Ռ մյուս դափական արյաններում իր իրավունքների պաշտպանության հնարավորությունից:

**Ղեկավարվելով «Սահմանադրական դափարանի մասին» Ռ օրենքով եւ ելնելով խնդրո առարկա անհափական դիմումի եւ կից փաստաթղթերի նախնական ուսումնահրության արդյունքներից, գրնում ենք, որ դիմումի հիման վրա գործի քննությունը սահմանադրական դափարանի կողմից ենթակա է մերժման հետեւյալ պարճառաբանությամբ.**

**Ռ սահմանադրական դափարանը վեճի առարկա հարցի վերաբերյալ իր մի շարք որոշումներում արդեն խսկ արդահայտել է հսկակ իրավական դիրքորոշում՝ առաջին արյանի դափարանների կողմից օրենքով նախագրեսված առանձին դեպքերում վերջնական դափական ակտ ընդունելու իրավաչափության վերաբերյալ: Մասնավորապես, 2008 թվականի սեպտեմբերի 9-ի ՍԴՈ-758 որոշման մեջ շեշտել է, որ «**Ռ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ անհափական դիմումի շրջանակներում սահմանադրական դափարանում կարող են վիճարկել դափարանի վերջնական ակտով կիրառված օրենքի դրույթները: Որպես վերջնական դափական ակտ առանձին դեպքերում կարող են հանդես գալ դարբեր արյանի՝ առաջին արյանի, վերաբնիչ կամ վճռաբեկ դափարանի դափական ակտերը»:****

2006 թվականի նոյեմբերի 7-ի ՍԴՈ-664 որոշման մեջ սահմանադրական դափարանն իրավաչափի է համարել նաև այն հանգամանքը, որ «**Նայասպանի Նանրապետությունում, ի դարբերություն շափ երկրների, ընդունական իրավունքի դափական պաշտպանությունն իրականացվում է ինչպես ընդհանուր իրավասության դափարանների, այնպես էլ սահմանադրական դափարանի կողմից: Ընդ որում, եթե Սահմանադրությամբ սահմանադրական դափարանին է իրավասություն վերապահված լուծել Նանրապետության Նախագահի եւ պարզամավորների ընդունությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը, ապա ընդհանուր իրավասության դափարանները, մասնավորապես, Ռ ընդունական օրենսգրքի 14, 17.1., 18, 20, 25, 26, 40, 75, 79, 102, 108 հոդվածներով նախագրեսված դեպքերում, քննության են առնում ընդունությունների նախապարհապման եւ անցկացման ընթացքում դրան գրած, ինչպես նաև ընդունական օրենսգրքի 139 հոդվածով նախագրեսված բոլոր դրան ընդունությունները, եւ դրանց վերաբերյալ ընդունում են վերջնական որոշում»:**

Սահմանադրական դադարանը սույն հարցի վերաբերյալ առավել ամբողջական իրավական դիրքորոշում է արդահայտել 2007 թվականի մայիսի 8-ի ՍԴՈ-700 որոշման մեջ, որի 5-րդ կետում, մասնավորապես, արձանագրել է, որ «... դիմողի կողմից վիճարկվող ՀՀ քաղաքացիական դադարակառության օրենսգրքի 24 գլխի դրույթները կարգավորում են ընդունակություններին, հանրաքվեներին մասնակցող քաղաքացիների եւ կուսակցությունների (կուսակցությունների միավորումների) ընդունական իրավունքների պաշտպանության եւ փեղական հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճերի վերաբերյալ դիմումների քննության վարույթը: Նկարի ունենալով, որ ընդունակությունները ժամկետային գործընթաց են, օրենսդիրը սահմանել է այդ բնույթի դիմումների քննության հնարավոր կրծապ ժամկետներ: Մասնավորապես, օրենսգրքի 154 հոդվածը դադարանին պարփակորեցնում է ընդունական վեճերի վերաբերյալ գործերը քննության առնել դիմումն սպանալու օրվանից հնգօրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան ընդունակությունների օրը, իսկ ընդունակությունների օրն սպացված դիմումը՝ անհապաղ: Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական դադարակառության օրենսգրքի 24 գլխի 155 հոդվածն ամրագրում է, որ ընդունական իրավունքի պաշտպանության վեճերով դադարանի վճիռը վերջնական է, ենթակա չէ բողոքարկման եւ օրինական ուժի մեջ է մყնում հրապարակման պահից: Օրենքի այս պահանջը նպարակ է հերապնդում վերացնել ընդունական իրավունքի խախտումները մինչեւ ընդունակությունների ավարտը, այլապես խախտված իրավունքի վերականգնման վերաբերյալ դադարանի վճիռը կկորցնի իր իմաստը՝ դիմողը չի կարող մասնակցել ընդունակություններին, ընդունակությունների կամ ընդունակությունների կամ ընդունակությունների միավորը՝ անհապաղ: Ենուն այս առանձնահարկությունը նկազի առնելով է, որ օրենսդիրն օրենսգրքի վիճարկվող գլուխը զեկուղի է «Առանձին պեսակի գործերով վարույթների առանձնահարկությունները» բաժնի «Հարուկ հայցային վարույթներ» ենթաբաժնում:

ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասը յուրաքանչյուր անձի ընձեռում է իր խախտված իրավունքները վերականգնելու համար դադարանի կողմից ողջամիգ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: ՀՀ քաղաքացիական դադարակառության օրենսգրքի վիճարկվող գլխի կանոնները, սահմանելով նման բնույթի գործերի քննության սեղմ ժամկետներ եւ բացառելով վճռի բողոքարկումը, դադարանին հնարավորություն են փալիս ողջամիգ ժամկետում վերականգնել յուրաքանչյուր քաղաքացու, կուսակցության (կուսակցությունների միավորումների) ընդունական խախտված իրավունքները»:

Սահմանադրական դադարանի սույն իրավական դիրքորոշումներն առավել քան կիրառելի են նաև օրենսդրական ներկա զարգացումների պայմաններում: 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ վարչական դադարակառության օրենսգրքի 145-րդ հոդվածով սահմանվեց,

որ թեկնածուների ու կուսակցությունների ընդրավան ցուցակները, ցուցակներում ընդգրկված թեկնածուներին գրանցելու, չգրանցելու, գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ վարչական ակտերի իրավաչափությունը վիճարկելու մասին գործերն ըստ Էության քննում եւ լուծում է վարչական դատարանը **Կոլեգիալ՝ 5 դատավորի կազմով:** Նույն կարգով են քննվում նաև Կենտրոնական ընդրավան հանձնաժողովի նորմատիվ բնույթ ունեցող որոշումների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը: Ընդ որում, **Ռ** վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ հոդվածի համաձայն՝ ընդրավան իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով վարչական դատարանի՝ գործն ըստ Էության լուծող դատական ակտերը վերջնական են, վերանայման ենթակա չեն եւ ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

Բացի դրանից, **Ռ** ընդրավան օրենսգրքի 118-րդ հոդվածը սահմանում է, որ «**Դատավամակորի թեկնածուի գրանցումը մերժելու կամ անվավեր ճանաչելու մասին ընդրավարածքային ընդրավան հանձնաժողովի որոշումը կարող է վիճարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով եւ ժամկետներում»: Իսկ նույն օրենսգրքի 46-րդ հոդվածի համաձայն՝ թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընդրավան ցուցակի, ընդրավան ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու մասին **դիմում կարող է ներկայացվել մինչեւ քվեարկության օրը:****

**Կոլեգիալ,** պվյալ դեպքում՝ **5 դատավորի կազմով,** վերջնական որոշման կայացումը՝ հայկապես ժամկետային սահմանափակում ունեցող գործերով, բնորոշ է մասնագիրացված դատարաններին եւ նման կարգի առկայության իրավաչափությունը ներդաշնակ է սահմանադրական դատարանի նախորդ որոշումներում արդահայրված իրավական դիրքորոշումներին: Ի դեպ, վերջնական են նաև սահմանադրական դատարանի որոշումները:

Նկատի պես է ունենալ նաև, որ միջազգային արդարադատական պրակտիկայում նույնպես դատավարական նման ընթացակարգերն իրավաչափ են համարվում: Եվրախորհրդի նախարարների կոմիտեն, մասնավորապես, 1995թ. փետրվարի 7-ի R (95) 5 հանձնարարականի 1-ին հոդվածում, որպես կանոն, շեշտելով սպորտադաս դատարանի դատական ակտի բողոքարկման հնարավորության անհրաժեշտությունը, միաժամանակ նկատի է առել, որ «եթե նպագակահարմար է համարվում նախարեսել շեղում նշված սկզբունքից, ապա այդ շեղումը պեսք է հիմնվի օրենքի վրա եւ պեսք է համապարասխանի արդարության ընդհանուր սկզբունքներին»: Իր հերթին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում

հետեւողականորեն արդահայփվում է այն սկզբունքային իրավական դիրքորոշումը, որի համաձայն՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազագությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարփառում սրբեղծել վերաբնիչ կամ վճռաբեկ դադարաններ... (մասնավորապես՝ Poitrimol v. France, գանգար թիվ 14032/88, 1993թ. նոյեմբերի 23-ի վճիռ, պարբ. 13-15, Staroszczyk v. Poland, գանգար թիվ 59519/00, 2007թ. մարտի 22-ի վճիռ, պարբ.125): Այս հանգամանքն իր արդացոլումն է գրել նաև ՀՀ սահմանադրական դադարանի 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՍԴՈ-780 որոշման մեջ:


Բացի վերոշարադրյալից, դիմողը հիմնականում ներկայացնում է գործի փաստական հանգամանքները եւ շեշտը դնում է դադարանի կողմից դրանց գնահատման իրավաճախության վրա: Իսկ դադարական ակտի իրավաչափության գնահատման լիազորություն սահմանադրական դադարանը չունի:

Խնդրու առարկա անհապական դիմումը նաև ակնհայր անհիմն է: «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ եւ 28-րդ հոդվածներով նախագիծաված են իրավասու սուրյեկտների կողմից սահմանադրական դադարան հասցեազրված դիմումներին ներկայացվող ընդհանուր պահանջները, դիմումին կցվող նյութերի շրջանակը, իսկ անհապական դիմումի ընդունելիության հավելյալ պարփառիր պայման է նույն օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, համաձայն որի՝ դիմումը պետք է պարունակի նաև Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Վկելին, ՀՀ սահմանադրական դադարանը 24.11.2009թ. ՍԴՈ-839 որոշման մեջ արդահայփել է իրավական դիրքորոշում, ըստ որի՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմումին ներկայացվող պահանջը, որի համաձայն՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի հիշյալ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի որեւէ հավկանիշով: Անհապական դիմումին ներկայացված այս պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախվվել: Խնդրու առարկա դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին համահունչ իրավաբանորեն ձեւակերպված հսկակ հիմնավորում:

Ելնելով վերոգրյալից եւ դեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ եւ 6-րդ կետերով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

## ՈՐՈՇԵՑ.

Քաղաքացի Դակոր Ռաֆիկի Դակոբյանի անհապական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:



25 ապրիլի 2012 թվականի  
ՍԴԴԿՈ/ 1-11